ՇԱՀԵ Ծ. ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

ԱՆԴԱՄԱԼՈՒՅԾԻ ԲԺՇԿՄԱՆ ՊԱՐԱԿԱՆՈՆ ՊԱՏՈՒՄԸ՝ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՂՈԹԱՄԱՏՅԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *Սբ. Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», պարականոն պատում, Հովհաննու ավետարան, անդամալույծ, բժշկություն:*

Սբ. Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանում օգտագործված աղբյուրների, հատկապես աստվածաշնչյան անվավեր և պարականոն գրվածքների վերհանումը, ինչպես արդեն նշել ենք սույն թեմայի մասին մեր մեկ այլ ուսումնասիրության մեջ, կատարվել է միայն մատյանի գիտաքննական առանձին հրատարակությունների և թարգմանությունների շրջանակներում՝ ըստ առկա անհրաժեշտության ու հանգամանքների: Նարեկ մատյանում աստվածաշնչյան պարականոն գրքի օգտագործման օրինակներից մեկին արված մեր ակնարկի[1] շարունակությունն ըստ էության ներկա հոդվածն է, որն այս անգամ նպատակ ունի վերլուծելու «Մատեան ողբերգութեան» աղոթագրքի ԺԴ եւ ԾՀ գլուխներում օգտագործված Հովհաննեսի Ավետարանի (ե 1-15) անդամալույծի դրվագը: Վերջինիս Սբ. Գրիգոր Նարեկացին, իրեն բնորոշ մտքի ու խոսքի համընթաց թռիչքով, տվել է բոլորովին նոր մի մեկնություն: Սբ. Գրիգոր Նարեկացու համաձայն՝ հենց այս անդամալույծն էր Հիսուսի մատնության գիշերը նրան ապտակողը (Հովհ. ԺՀ 22-23), որն էլ Հիսուսին իր բժշկությունից շատ չանցած մատնել էր հրեաներին ու միացել նրանց: Պատկերն առավել հստակ Նարեկացին արտահայտում է ԾՀ գլխում.

«Աստուածապէս ինձ հրաշագործեա՛, / Ողորմած արքայ երկնաւոր, / Որպէս անկելոցն ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս՝ / Ժողովեցելոցն ի սրահին Բեթհեզդայ, / Յորոց մի էր եւ կրկին թերահաւատն, / Երից տասանց եւ ութի միոյ ամաւք ախտացեալ յաւդիցն լուծմամբ, / Որում ոչ անխայեցեր զբժշկութիւնն ձեռնտուութիւն՝ / Իբր գիտելով զանբոյժ չարութիւնն, Որ նիւ-

[1] «Սողոմոնի ապաշխարությունը եւ Ս. Գրիգոր Նարեկացին (Ս. Գրիգոր Նարեկացու կողմից աստվածաշնչյան անվավեր գրքի օգտագործման մի օրինակ)», *ԲՄ* 23, 2016, էջ 54-60:

թեացն քեզ յաւուր մատնութեան / Դառն գիշերին տիրամարտութեան՝ / երախտաւորիդ, մեծիդ եւ բարերարիդ։

Բ. Որ թեպէտ կանխաւ իմն զգուշացուցեր, / Թէ՝ մի՛ մեղանչեր, զի մի՛ կրկնեսցին կրկին քեզ չարիք,- / Ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց / Սկզբնաւոր անհամբուրելի՝ դատողացն զքեզ ի խաչին։ / Եւ դու այնպիսւոյ անյարիր ջատուկ, / Մահու ծննկեցեալ չարաշուք առն ողորմեցար, / Անճառ բարութիւն, սխրալի մարդասիրութիւն...»[2]։

Աղոթամատեանի երկու նշանաւոր մեկնիչները՝ Հակոբ պատրիարք Նալեանը և մխիթարյան Հայր Գաբրիել Ավետիքյանը, անդրադառնալով այս հատվածին, հիմնականում մեջբերում են միջնադարյան քրիստոնյա մեկնիչների կարծիքները՝ փորձելով հնարավորինս հիմնավոր բացատրություն տալ Սբ. Գրիգորի մեկնությանը։ Հակոբ Նալյանը կարծիք է հայտնում՝ անդամալույծին Նարեկացու տված «կրկին թերահաւատ» բնորոշումը նախ նշանակում է, որ անդամալույծը, 38 տարի շարունակ կրելով իր հիվանդության ծանր բեռը, մեղքերի պատճառով էր հայտնվել այդ սոսկալի վիճակում, և ապա մատնանշում այն փաստը, որ հակառակ Քրիստոսի խոսքին, թե՝ «գնա՛ և այսուհետև այլևս մի՛ մեղանչիր», անդամալույծն այնուամենայնիվ չի զգուշանում և հենց ինքն է առաջին ապտակը տալիս Հիսուսին՝ նրա ձերբակալման գիշերը[3]։ *Նալյանը ենթադրում է, որ հավանաբար այս արտահայտության համար հիմք է ծառայել Սբ. Հովհան Ոսկեբերանի՝ Հովհաննու Ավետարանի մեկնության ԼՐ ճառը. «...սակայն Ոսկեբերանն ի վերայ այնմ, թէ ահա ողջացար, մի՛ եւս մեղանչեր, ասէ՝ եւ գիտեմք զի ոմանք զանդամալոյծս զայս ի բանս արկանելով ասեն, եթէ յետոյ դատախազ եղեւ Քրիստոսի...»*[4]։ *Նալյանը Ոսկեբերանի հիշատակած «ոմն մեկնիչներին» թեականորեն նույնացնում է Սբ. Աթանաս Ալեքսանդրացու և Սբ. Եփրեմ Ասորու հետ*[5]։

Հայր Գաբրիել Ավետիքյանի «Նարեկլոյծ»-ում, որն ավելի աչքի է ընկնում քննական-բանասիրական իր կուռ կառուցվածքով և հիմնավորումներով, «կրկին թերահաւատ» արտահայտությունը մեկնվում է հետևյալ կերպ. «Անդամալոյծն՝ որ յերեսունեւութամեայ հիւանդութենէն բժշկեցաւ. եւ ասի կրկին կամ երկիցս թերահաւատ, նախ՝ զի զծանուցանելն նորա առ քահանայապետսն՝ թէ Յիսուս բժշկեաց զիս, ոմանք համարին առ չարութեան արարեալ. երկրորդ, ի մատնութեան գիշերին ասեն ապտակեալ զՔրիստոս, եւ ըստ այսմ

---

[2] Տե՛ս *Մատեան ողբերգութեան*, աշխ. *Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի*, Երևան, 1985։

[3] *Մեկնութիւն աղօթից եւ ներբողինաց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ*, Կ. Պոլիս, 1745, էջ 428։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում։

կարծեաց խօսի սուրբ վարդապետս: Սակայն բազում այլ վարդապետք՝ Ոսկեբերան, Կիւրեղ, Օգոստինոս՝ գովութեամբ յիշատակեն զայրս զայս՝ ազատ ի վերոգրեալ կասկածանաց»[6]:

Անկասկած, բոլոր այս բացատրությունները հենվում են գուտ ենթադրության վրա, քանի որ վերոնշյալ մեկնիչներից որևէ մեկի երկում չկա Հովհաննու ավետարանի մատնանշված տեղիի նմանատիպ մեկնություն: Սբ. Հովհան Ոսկեբերանը միայն ակնարկում է անդամալույծի վերաբերյալ այս բացասական կարծիքի առկայության մասին՝ իրենից առաջ գրված մեկնություններում. «Գիտեմ, որ ոմանք համարում են, թե այս անդամալույծը Քրիստոսին մեղադրողն էր, և դա է պատճառը, որ Քրիստոս նման խոսքերով է դիմում նրան (իմա՝ «գնա՛ եւ այլեւս մի՛ մեղանչիր»)...»[7]: *Ինչ վերաբերում է Սբ. Եփրեմ Ասորու մեկնությանը, ապա նրա «Մեկնութիւն համաբարբառ» հայերեն թարգմանության և ասորերեն պահպանված հատվածներում նույնպես բացակայում է որևէ ակնարկ կամ նմանատիպ մեկնություն*[8]: *Իսկ Սբ. Աթանաս Ալեքսանդրացու՝ Հովհաննու Ավետարանի մեկնությունից պահպանվել է միայն մեկնողական մի հատված, որը վկայված չէ հայ թարգմանական գրականության մեջ*[9]: *Ի հավելումն պետք է նշել նաև, որ քրիստոնեական պարականոն գրականության մեջ առկա է Հովհ. ե 1-14 հատվածին առնչվող միայն մեկ գրվածք՝ պահպանված հայերեն և վրացերեն խմբագրություններով*[10]: *Այստեղ, սակայն, դատելով բնագրի տրամաբանությունից և խիստ շեշտված ջատագովական բնույթից, բացառելի է անդամալույծի նման արարքի ու վարվելակերպի մասին որևիցե*

---

[6] *Նարեկ աղօթից, համառոտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1827, էջ 296: Նույնպիսի մի համառոտ մեկնություն է տալիս նաև 1701-1702 թթ. Կ. Պոլսում հրատարակված Նարեկ մատյանի վերջում կցված Գրիգոր Խլաթեցու լուծմունքը (այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Պ. Խաչատրյան**, *Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը*, Ս. Էջմիածին, 1996, էջ 274-280). «Զի զառաջին ապտակն Յիսուսի նա էած, եւ ապա այլմն համարձակեցան», *Գիրք աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ արարեալ*, էջ ՃՂԶ:

[7] *Commentarius in sanctum Joannem Apostolum et Evangelistam*, PG 59, col. 211-212 :

[8] *Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք*, հ. Բ, «Մեկնութիւն համաբարբառ որ ըստ չորից աւետարանչաց», Վենետիկ, Ս. Ղազար, 1836, էջ 134-135: Համմտ. նաև **Éphrem de Nisibe**, *Commentaire de l'Evangile concordant ou Diatessaron*, tr. du syriaque et de l'arménien, intr., tr. et notes par Louis Leloir, *Sources Chrétiennes* 121, Paris, 1966, p. 231-232:

[9] Տե՛ս **A. Avagyan**, *Die armenische Athanasius. Überlieferung das auf Armenisch unter dem Namen des Athanasius von Alexandrien tradierte Schriftum*, De Gruyter: Patristische texte und Studien, Band 69, Berlin/Boston, 2014, p. 6-10, 23-24:

[10] **Pierre Geoltrain et Jean-Daniel Kaestli** (éd.), *Écrits apocryphes chrétiens*, vol. II, Gallimard, Paris, 2005, p. 64. Հայերեն բնագրի հրատարակության համար տե՛ս **Л. Степанян**, "Страница из истории средневековой армянской апокрифической литературы ('История расслабленного')", *Լևոն Խաչիկյան 90, նյութեր Մաշտենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի, 2008 թ.)*, Երեւան, 2010, էջ 359-384:

ակնարկ: Հովհաննու Ավետարանի՝ անդամալույծի դավաճանության և Հիսուսին մեղադրելու դրվագին հայ միջնադարյան մեկնիչներից անդրադարձել են Սարգիս Շնորհալին[11] *և Սբ. Գրիգոր Տաթևացին: Վերջինս, սակայն, անդամալույծի արարքը նույնպես բացատրում է «ոմանք ասեն» չեզոք արտահայտությամբ՝ ընդ որում, հղելով Սբ. Գրիգոր Նարեկացու Աղոթագրքի ԾՀ գլուխը: Ավելին, հենց նարեկյան մեկնությամբ էլ Տաթեւացին բացատրում է դրվագի հոգևոր իմաստը. «...այլ եւ սուրբն Գրիգոր Նարեկացի ասէ յիսունութերորդ ճառն երեք պատճառ ի դէմս մեր. նախ՝ յորժամ ի պատուհասէ զերծանիմք, այլ մի մեղիցեմք: Երկրորդ՝ յետ մկրտութեան թէ մեղանչեմք, տանջանքն է անվախճան: Երրորդ, թէ յետ խոստովանութեան դարձեալ կրկնեմք, լինիցի յետինն մարդոյն չար քան զառաջինն, որպէս ասէ Տէր...»*[12]*:*

Հովհ. ե 1-14 հատվածի՝ նարեկյան մեկնությանը համապատասխան մի բացատրություն վկայված է Անտիոքյան մեկնողական դպրոցի նշանավոր ներկայացուցիչ Թեոդորոս Մոփսուեստացու Հովհաննու Ավետարանի մեկնությամբ: Մեջբերենք այս երկի համապատասխան տեղին. «Երբ անդամալույծը ներողություն խնդրեց՝ նշելով, թե մեկ ուրիշն էր հրամայել իրեն շաբաթ օրով վերցնելու իր մահիճը, հրեաներն իրենց ողջ զայրույթն ուղղեցին հրաման տվողի դեմ... Այդ կատաղած ու զայրացած ամբոխին Հիսուսի անունը տալով՝ նա, սակայն, բարեկամաբար չգործեց, այլ ավելի շուտ, հրեական օրենքը կատարելու համար, դավաճանեց իր բարեգործին: Եվ ոչ էլ կարելի է ինչ-ինչ բացատրություններ գտնել նրան արդարացնելու նպատակով՝ իբրև անհրաժեշտությունից դրդված մի քայլ, քանզի ենթարկվում էր հարցատուների ճնշումներին: Արդ, երբ մեր Տերը նրան գտավ Տաճարում, ա՛յդ բառերով դիմեց նրան՝ բժշկվածին, որն արդեն ի ցույց էր դրել իր հակվածությունը մեղքին»[13]*:*

Վաղ եկեղեցական մեկնողական ժառանգությանն արված այս հպանցիկ տարաշեղումից հետո իրավացիորեն կարելի է հարցնել՝ ո՞ր մեկնությունից է քաղել Սբ. Գրիգոր Նարեկացին Հովհ. ե 1-14 դրվագի նմանատիպ բացատրու-

---

[11] Անդամալույծի կողմից Հիսուսին՝ հրեաներին մատնելու և չարությամբ մատնացույց անելու մեկնողական ավանդույթին է ծանոթ նաև Հովհաննու Ավետարանի մեկ այլ մեկնիչ՝ Նանա Ասորին, որի մեկնությունը պահպանվել է միայն հայերեն տարբերակով: Նանա մեկնիչը, սակայն, ամբողջությամբ հերհում է այս տեսությունը՝ անդամալույծին ներկայացնելով իբրև Հիսուսին հավատացած և նրա բժշկությամբ հոգեպես զորացած մեկին (տե՛ս *Նանայի Ասորւոյ վարդապետի մեկնութիւն Յովհաննու Աւետարանին*, աշխ. Հ. Քեռոբէ Ա. Զրաֆեանի, Վենետիկ, Ս. Ղազար, 1920, էջ 103-104):

[12] *Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի*, աշխ. ***Ղուկաս աբգ. Զաքարյանի***, Նոր Կտակարանի գրքերի մեկնություններ 12, Ս. Էջմիածին, 2005, էջ 229:

[13] **J. M. Voste**, *Theodori Mopsuesteni commentarius in Euangelium Iohannis Apostoli* (CSCO 115, Scriptores Syri 62), Louvain, 1940, p. 100-102: Համմտ. նաև *Ancient Christian Commentary on Scripture, NT IV a, John 1-10*, ed. by ***Joel C. Elowsky***, Inter Varsity Press, 2006, p. 184:

թյունը՝ Ոսկեբերանի՛, Եփրեմի՛, Աթանասի՛, Թեոդորոս Մոփսուեստացո՛ւ, Նանա Ասորո՛ւ... Խիստ անհավանական համարելով Մոփսուեստացու մեկնողական երկին Սբ. Գրիգոր Նարեկացու ծանոթությունը[14]՝ պետք է իրավամբ նշել նաև, որ վերը թվարկված մյուս բոլոր մեկնություններում, ինչպես արդեն տեսանք, չկա նմանատիպ մոտեցման համար որևիցե հիմք: Մրն է ուրեմն «Մատյան ողբերգության» ԾԸ գլխում արձանագրված այդ պարականոն դրվագի ներշնչման աղբյուրը:

Մեր կարծիքով՝ Նարեկացին օգտագործել է Արևելյան վանականության մեջ լայնորեն տարածված մի զրույց կամ ավանդություն, որն իր արտացոլումն է գտել Սբ. Եփրեմ Ասորուն վերագրված ապաշխարության աղոթքներում: Խոսքը մասնավորապես, միայն հայերենով պահպանված «Յորդորակ ապաշխարութեան» (ձեռագրերում և այլուստ հայտնի նաև «Յաղագս ապաշխարութեան» խորագրով) աղոթագիրքն է: Վերջինս լույս է տեսել մի քանի անգամ. հրատարակություններից առավել լայն տարածում են ունեցել 1703 և 1889 թվականների տպագրությունները[15]: Եփրեմ Ասորուն վերագրված այս աղոթագիրքն, ըստ էության, բաղկացած է մի քանի մասից, որոնք շատ հաճախ հրատարակվել են իբրև առանձին աղոթագրքեր: Աղոթագրքի առաջին մասը կազմված է 140 կարճ և երեք բավական ընդարձակ ապաշխարությանը նվիրված աղոթքներից[16], իսկ երկրորդ մասը՝ Մեծ Պահքի 40 օրերի հերթականությամբ դասավորված համապատասխան աղոթաշարքից՝ «Յորդորակ ապաշխարութեան» ընդհանուր անվանումով: Աղոթագրքիս հնագույն ձեռագրերը թվագրվում են ԺԳ դարով, իսկ Վնտկ. 953 հնագույն թղթյա ձեռագրի (999 թ.) հիշատակարանի վկայության համաձայն՝ Սբ. Եփրեմ Ասորու «Պատճառք թղթոցն Սրբոյն Պաւղոսի» գործը և այլ երկեր տարածված են եղել հատկապես Արծրունյաց թագավորության վանքերում, որտեղից էլ մեր գրչագրի ընդօրինակողը կարողացել է ամբողջացնել Պողոսի թղթերի մեկնության ձեռագիրը՝ Եփրեմի և Հովհան Ոսկեբերանի երկերի համադրմամբ[17]: Իհարկե, ասորերեն

---

[14] Նարեկացու օգտագործած մեկ այլ հնարավոր աղբյուր կարող էր դիտարկվել նաև Կեղծ Աթանաս Ալեքսանդրացու «Ի չարչարանս եւ ի խաչելութիւն Տեառն» ճառը, որը պահպանվել է հայերեն թարգմանությամբ (ձեռ. Վիեն. 629 (ԺԹ դ.) և Վիեն. 648 (ԺԴ դ.)): Այստեղ նույնպես, սակայն, չկա Հովհաննու Ավետարանի վերոնշյալ հատվածին արված որևէ ակնարկ: Համմտ. նաև. **A. Avagyan**, *նշվ. աշխ.*, էջ 63-64, *Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա*, կազմ.՝ *Հ. Հ. Ոսկեան*, Վիէննա, 1963, էջ 112:

[15] **Եփրեմ Խուրի Ասորի**, *Յաղագս ապաշխարութեան*, Կ. Պոլիս, 1703: *Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Եփրեմի Խուրին Ասորւոյ*, Վաղարշապատ, 1889: Մեզ հետաքրքրող հատվածը՝ Աղօթք ԺԳ, էջ 25-26:

[16] *Գիրք աղօթից*, Կ. Պոլիս, 1741, 1747, 1767, 1779, 1788, 1793, 1793-1795, Երուսաղէմ, 1933:

[17] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, կազմ. *Հ. Ս. Ճեմճեմեան*, հ. Ը, Ս. Ղազար-Վենետիկ, 1998, սյուն. 405:

բնօրինակի բացակայության հանգամանքներում՝ դժվար է որևէ հստակ ու որոշիչ խոսք ասել Աղոթագրքի՝ թարգմանական կամ ինքնուրույն բնույթի երկ լինելու վերաբերյալ[18]*: Թվագրման առումով նույնպես կարող ենք հենվել միայն Վնտկ. 953 ձեռագրի և ԺԴ դարի հնագույն գրչագրերի պահպանած վկայությունների վրա: Այնուամենայնիվ, առկա տվյալները հուշում են, որ արդեն իսկ Ժ դարից սկսած, եփրեմ Ասորու այս աղոթքներն ու հորդորակը լայնորեն տարածված են եղել Մեծ Հայքի վանական համալիրներում, և ուրեմն, շատ հավանական է, որ Սբ. Գրիգոր Նարեկացին նույնպես վերարտադրել է այդ աղոթագրքում պահպանված Հովհ. ե 1-14 դրվագի մասին պարականոն ավանդույթը:*

Նախքան Նարեկացու՝ այս դրվագին տված հոգևոր բացատրությանն անդրադառնալը՝ գանք այժմ Նարեկ մատյանի ԺԴ գլխում առկա ոչ պակաս կարևոր մի երևույթի, որը նույնպես սերտորեն առնչվում է մեր քննարկած նյութին: Սույն գլխի Բ հատվածում Նարեկացին իբրև օրինակ է բերում աստվածաշնչյան պատումներով իմաստավորված հետևյալ տողերը. «Ո՛չ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ / Ի ձեռն աւազակաց սրոյ խողխողեալն (Ղուկ. Ժ 30-35, Բարի Սամարացու առակը – Շ. Ա.), / Քանզի կարկամեալ էր, / Ո՛չ ձայն պաղատանաց զկնի արձակեաց, / Քանզի անկռինչ էր, / Ո՛չ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ, / Քանզի խորտակեալ էր, / Ո՛չ աչս կողկողագինս արտասուաւք ողբոց բարերարիդ յանդիման կացոյց, / Քանզի վնասապարտ էր, / Ո՛չ ի պատգամ բանից միջնորդի զողորմածիդ կամս հաճեցոյց, / Զի անայցելու էր, / Ո՛չ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն / Արիւներանգ ներկուածով ձորձոց զգթածիդ սիրտ ճմլեցոյց, / Վասն զի անյոյս էր: / Նաեւ ո՛չ ծնկովքն հաստատութեամբ, (ընդգծումը մերն է՝ Շ. Ա.) իբր գարշապարաւ ոտին վարեցաւ, / Այն զի անյարիր էր. / Քանզի կիսամեռն ասել կենդանւոյն՝ / Սակաւ ինչ նուազ է մեռելութեան: / Մանաւանդ զի ի քոյոցդ խրատեալ բանից, / Եւ բարերարեալ քոյդ ողորմութեան, / Եւ փառաւք քո լուսազարդեալ,- / Ոչ միայն զի ոչ վերջացաւ ի հակառակն քո ընթացից, / Այլ ստահակեալ ապստամբութեամբ՝ յիւր թշնամեացն թիւ յաւելաւ, / Ընդ նոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց ատելեացն քոց»:

---

[18] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Edward G. Mathews, Jr.,** "A First Glance at the Armenian Prayers Attributed to Surb Ep'rem Xorin Asorwoy," in: ***Roberta R. Ervine*** (ed.), *Worship Traditions in Armenia and Neighboring Christian East*, *AVANT: Treasures of the Armenian Christian Tradition*, St. Vladimir's Seminary Press-St. Nerses Armenian Seminary, Crestwood, New York, **2006**, pp. **161-173**, **նույնի՝** «Աստուածային հայերեն կատարված թարգմանություններն ու դրանց հեղինակները», թրգմն. Շահե աբղ. Անանյան, *էջմիածին* **Զ (2012)**, էջ 32: Համմտ. նաև Edward G. Mathews Jr.-ի կողմից անգլերեն թարգմանված աղոթագիրքը՝ *The Armenian Prayers Attributed to Ephrem the Syrian*, Gorgias Press, **2014**:

Մեր մեջբերած այս հատվածը թե՛ մատյանի գիտաքննական հրատարակության և թե՛ արդի որոշ հայ և օտար թարգմանություններում ընկալվել է իբրև ամբողջովին Բարի սամարացու առակի մեկնություն: Այնինչ, խոսքն այստեղ ընդամենը «յովտ մի»՝ փոքրիկ ստորակետը վերջակետ դարձնելու մասին է: Բացատրենք: Մեր կողմից ընդգծված հատվածում՝ **Վասն զի անյոյս էր: / Նաեւ ո՛չ ծնկովմն հաստատութեամբ**, *քննական հրատարակության մեջ «անյոյս էր» բառակապակցությունից հետո դրված է ստորակետ, որով հաջորդ հատվածը՝* **Նաեւ ո՛չ ծնկովմն հաստատութեամբ**, *ամբողջությամբ կապվում է Ղուկ. Ժ 30-35 հատվածի նարեկյան մեկնության հետ: Սակայն հստակ է, որ ավետարանական պատումի համաձայն, Հիսուս իր պատմած առակի մեջ չէր կարող խրատել «սրոյ խողխողեալ»-ին, իսկ վերջինս էլ, իր հերթին, չէր կարող առողջանալուց և Հիսուսի խրատը լսելուց հետո շարունակել իր խստապարանոց ընթացքը և միաբանվել Հիսուսին ատողների հետ... Պարզ է, ուրեմն, որ խոսքն այստեղ ավետարանական երկու տարբեր պատումների մասին է, տվյալ դեպքում՝ Ղուկ. Ժ 30-35 և Հովհ. ե 1-14: Այս տարբերակումը պատումի կազմության տեսանկյունից հեշտությամբ նկատելի է՝ ստորակետը վերջակետ դարձնելու դեպքում: ԺԴ գլխում նույնպես Նարեկացին ակնարկում է երախտիքն ու տերունական պատվերն ուրացած անդամալույծին, և սա նկատելի է նաև կիրառված մակդիրներից ու որակումներից: Ամենացայտուն օրինակն այս պարագային «Այն զի անյարիր էր» արտահայտությունն է, որտեղ, ինչպես ՇԸ գլխում, «անյարիր» նշանակում է կանգնելու անկարող, անընդունակ՝ ուղղակիորեն ակնարկելով անդամալույծի ոտքերի ծանր հիվանդությունը*[19]*:*

Անդամալույծի ավետարանական դրվագի նման պարականոն մեկնությունը Ս. Գրիգորի կողմից նպատակ ունի շեշտելու Աստծո անսահման ներողամտության և մարդկային՝ մեղքի հանդեպ հակվածության հակասությունը: Նարեկացու համաձայն՝ Հիսուս նախքան անդամալույծին բժշկելը, գիտեր նրա չարության մասին՝ «սկզբնաւոր անհամբուրելի» / ՇԸ /, ինչպես նա դիպուկ բնորոշում է: Անդամալույծին տրված բժշկությունը Սբ. Գրիգորն ուղղակիորեն կապում է մեղավոր վիճակից դեպի ապաշխարության և զղջման ճանապարհն անցնելու երևույթի հետ՝ այն անվանելով Աստծո կողմից կատարված հրաշագործություն: Ընդ որում, աստվածային ներողամտությունն ու սերն անչափելի են, անսպառ նույնիսկ ամենաանհույս մեղավորների համար: Աստված ինքը, Նարեկացու համաձայն, պարտվում է իր իսկ ողորմությունից, բռնադատվում իր մարդասիրության կողմից («սխրալի մարդասիրութիւն»), հարկադրված բարության է գործում, որովհետև այդպիսին է Աստծո էությունը: Աստվածա-

[19] Տե՛ս նաև *Նարեկ ազօթից, համառոտ եւ գգուշաւոր լուծմամբք բացայայտեալ*, էջ 296: «Անյարիր. որ ոչ կարէր յառնել եւ կանգնիլ»:

բանական այս պարադոքսը, երբ Աստված նկարագրվում է իբրև Իր սիրո կամ մարդասիրության հարկադրանքի տակ եղող էություն, նարեկացին տեսանելի ու հասկանալի է դարձնում հենց ԺԴ և ԾԸ գլուխներում մեջբերված անդամալույծի պարականոն դրվագի միջոցով։

Սբ. Գրիգոր Նարեկացու Աղոթագրքի մեջ սուրբգրային, հայրաբանական, պարականոն և այլ աղբյուրների վերհանումն ու դրանց կիրառության ձևերի ուսումնասիրությունը հատկապես կարևոր է Նարեկ մատյանի կառուցվածքի և բովանդակության ճիշտ ընկալման ու բացատրության համար։ Այս իմաստով հույժ կարևոր է հասկանալ նաև այն ազատությունն ու մեթոդական յուրահատկությունը, որով ստեղծագործում է Նարեկացին՝ իբրև խորհրդազգաց աստվածաբան ու մտածող։ Նրա համար կարևորություն չունի այս կամ այն աղբյուրի կանոնականությունը կամ առաջնահերթությունը. նա պարզապես ստեղծում է իր հոգևոր հարուստ աշխարհի նյութականացման ու արտահայտման համար անհրաժեշտ պատկերներ…

REV. FR. SHAHE ANANYAN

THE APOCRYPHAL NARRATIVE ON THE HEALING OF THE PARALYTIC (JOHN 5: 1-15) IN THE *BOOK OF LAMENTATIONS* BY ST. GRIGOR NAREKATS'I

Keywords: St. Gregory of Narek, *Book of Lamentations*, apocryphal narrative, Gospel according to John, paralytic, healing.

The author supposes that in Chapters 14 and 68 of the *Book of Lamentations*, St. Grigor Narekats'i has used the apocryphon on the healing of the paralytic (John 5:1-15) narrated by St. Ephrem the Syrian in his *Prayerbook*. Starting from the 18th century, some commentators on the *Book of Lamentations* referred to works by St. Ephrem the Syrian, St. John Chrysostom, and St. Athanasius of Alexandria as possible sources of Narekats'i. However, in none of those works was this apocryphal narrative used for commenting on John 5:1-15. The only evidence of such use is attested in the commentary on this Gospel by Theodore of Mopsuestia, which could not have been known to Narekats'i. Therefore, the author assumes that another writing could have served as a source for the apocryphal story in the *Book of Lamentations*, namely, Chapter 13 of the *Prayerbook* by St. Ephrem the Syrian surviving only in Armenian version. Together with other commentaries and works

by St. Ephrem the Syrian, the *Prayerbook* was well known in the monasteries of Armenia in the 9th-10th cc. It is then not accidental that Chapter 13 of the *Prayerbook* was utilized in the *Book of Lamentations* as a special tool for the theological interpretation of John 5:1-15.

О. ШАЭ АНАНЯН

АПОКРИФ ОБ ИСЦЕЛЕНИИ РАССЛАБЛЕННОГО (ИО. 5:1-15) В *КНИГЕ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ* СВ. ГРИГОРА НАРЕКАЦИ

Ключевые слова: Св. Григор Нарекаци, *Книга Скорбных Песнопений*, апокриф, Евангелие от Иоанна, расслабленный, исцеление.

Автор предполагает, что в 14-ой и 68-ой главах *Книги скорбных песнопений* Св. Григор Нарекаци использовал апокриф об исцелении расслабленного (Ио. 5:1-15), изложенный в армянском переводе *Молитвенника* Св. Ефрема Сирина. Начиная с XVIII века, отдельные комментаторы *Книги скорбных песнопений* ссылались на произведения св. Ефрема Сирина, Св. Иоанна Златоуста, Св. Афанасия Александрийского как на возможный источник Нарекаци. Однако ни в одном из этих произведений этот апокрифический сюжет не использован в комментариях к Ио. 5:1-15. Единственный случай его использования засвидетельствован в комментарии на это Евангелие Феодора Мопсуестского. Исключая возможность знакомства Григора Нарекаци с этим комментарием, автор предлагает рассматривать в качестве источника для апокрифического мотива в *Книге скорбных песнопениий* 13-ю главу *Молитвенника* Св. Ефрема Сирина, сохранившегося только в армянской версии. *Молитвенник*, наряду с другими комментариями и сочинениями св. Ефрема Сирина, был хорошо известен в монастырях Армении в IX-X вв., и не случайно, что глава 13 *Молитвенника* была применена в *Книге скорбных песнопениий* как особый инструмент для богословского толкования Ио. 5:1-15.